

ՎԱՀԱՆ ԱՐԱՄՈՒՆԻ

ԲԱՆԱՍԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ





ՎԱՀԱՆ ԱՐԱՄՈՒՆԻ

891.99

Ա-82

# ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2115  
5172  
11121  
8461  
11



ՀԱՅԿԵՆՏՐԱՏ

ԵՐԵՎԱՆ

1948

В. АРАМУНИ  
СТИХИ

(На армянском языке)  
Арггиз, 1948, Ереван

## ԴՌՒ ՀԱՅԱՍՏԱՆ, ԻՄ ՄԱՅՐ

Երկար քափառումից հետո, ես հանգրվան գտա Այտեղ: Իմ հայրենի հողում: Երևանում չքնաղ, Որին երագել էի իմ երագներում: Եվ դա ինձ քվացել էր ցնորք մի հեռավոր: Խաղաղ ինչպես այգին այն եղեմյան, ուրկից Մատիսը վես Մեզից ժպտում էր ինձ բարի: Օ՛, հարագատ իմ հող, Բո կարոտը քաշում էր ինձ, ինչպես առավոտյան վառվող բոցե կրակի անմարելի շունչը ելնող:

Մեր հոգիների կապից և սիրուց մեր, ինձ գտար, Եվ նանաչեցիր որդուն քո, որի սերը դեպի Գեղ է բոցի նման մոլեգնացել: Օ՛, դու կրակ անմար, Որ մի օր վառեցիր ինձ, և դեռ ինչքան պիտի Դու վառես քո որդոց - հեռվում պանդուխտ գնացած, Որ դեռ քո կարոտի սիրուց քափառում են երկար, Դե՛, դո՛ւ ապավենն ես նրանց հույսի կորած, Փայփայամբը հոգու, դու նոր Հայաստան, իմ մայր:

Իմ ձայնը, իմ երգը ցնծուն դու ես ինձ պարգևել, Սովետական իմ Հայաստան, դու հրնվամբը որդուդ, Գիտեմ ինձ կխլի մեկ օր մահվան շունչը անգուր, Բայց քո գրկից երբե՛ք, երբե՛ք: Երբեք չի կարող բաժանել Ոչ մի ուժ, քանզի կրում եմ ես իմ սրտի վրա

Քե՛զ, մայր Հայաստան, երկիր իմ: Դու բազում հայու-  
բայան

Սրտի՛, մտքի՛, հոգու՛ արև, և հույս ուկի.

Երբ դու կառ աշխարհում, ի՛նչ ուրախ, ի՛նչ ուրախ  
արևն է՝

Թագ կրում այս երկրի երեսին:

Նվ եղել են պաներ դժնի, որ սգացել ես դու.

Քո որդիների կորուստը, նրանց մահը դաժան,

Բայց և որոնց պայծառի դեմ համառ.

Սեզ սարերն ու ծովերն էին խոնարհում: Եվ ահա

Նրանց դարձի համար, նրանց առա՛ջ, նրանց պատվի՛ն

Դու շողացի՛ր որպես ասող այնքա՛ն բարեգուշակ,

Դու նրանց հայտի՛, ուժի՛ և սիրո յույսե՛ հանգրվան

Նդար ամենուր, իմ երկիր Սովետական Հայաստան:

Բայց ես ինչքա՛ն ունեմ փույրեր ու եղբայրներ

հեռվում.

Որոնց կարոտը, հույսն ես դու: Անմարելի կրակ—

Ջերմացրու և մի թողնիր հեռվում նրանց պանդուխտ,

Դու հայրենի երկիր, ի՛մ հող, դու բախտի նշանակ:

Իմ փույրերն այնտեղ էլ այնպես, ինչպես և այստեղ են՝

Սև աչքեր ունեն նման վազող այն եղնիկի,

Սև հոնքեր միշտ աղեղված, այտերին վարդի թեր

Եվ սև մազեր շողերի պես փայլող արեգակի:

Քո սերն է կոչը նրանց, ինչպես և մերը: Ահա

Նրևանը ֆաղափամայր և անունդ, իմ երկիր,

Մի կախարդիչ բառ է դարձել մեր և նրանց շուրթին,  
Իսկ քա կամար ծխածանը՝ ծիրանի ոսկեգիր:  
Դու մա՛յր երկի՛ր, ի՛մ Հայաստան և հարազատ իմ հող,  
Ուժ ես տվի, հաղթանակ ինձ և բոլոր հայերին  
Նվ պնճեղի բույրով, լույսով անունդ օծվի քոդ,  
Դու օրորա՛ն, դու օրորա՛ն սրտերի:

## ՀՆԳԱՄՅԱՆԻ ԵՐԳԸ

### ԵՐԳ ԿԱՌՈՒՑՈՒՄԻ

Երբ բացվում է օրը առավոտի բույրով,  
Խնդութունով լցվում ու երգերով զվարթ,  
Ես ձեզ մոտ եմ գալիս ծանոթ ճամբաներով,  
Իմ ընկերներ անդին, հեռավորներ անպարտ,  
Ահա դեմքերը ձեր՝ օ՛ հարազատ մարդիկ,  
Հայացքներդ խոհուն՝ օվկիանի պես ոնհուն,  
Ես ձեր շունչն եմ զգում ահա այնքան մոտիկ  
Այս օրերի ամեն, ամեն մի ոլորտում,  
Ծավալվում է ահա երգը հնգամյակի,  
Դառնում լուսեմի կյանքս Բայց օրերում այս թե՛ս  
Դեռ եյնում են իմ դեմ այն օրերը կրկին,  
Կովի երեկն ահեղ՝ մահասարսուռ ու սև  
Մենք այն կովով առանք՝ բերդը այս հնգամյակի,  
Եվ արյունով առանք կյանքը մեր ապագա,  
Այս օրերի համար թրձեցինք մեր հոգին,  
Եվ գալիքի համար, որ պիտի գա...  
Ինչպես այն օրերում ելանք մեկ մարդու պես  
Առաջնորդի վսեմ կարմիր դրոշի ներքո,  
Եվ գնացինք զրոհ և կովեցինք այնպես,  
Որ առաջնորդը մեր չմնաց մեզնից դժգոհ,  
Եվ հիմա էլ նորից մենք ելել ենք մարտի,  
Բայց ոչ թնդանութով և ոչ գեներով ռազմի,  
Հիմա մուրճերն են մեզ բերում փառք ու պատիվ,  
Հաղթ իջնելով սալին հնգամյակի

Հնգամյակի ոճով անհունորեն սիրով—  
Դեմքն հնք վերակերտում խոցված հայրենիքի,  
Առանց շիթ արյունի, հակինթ մեր քրտինքով,  
Ահա բարձրանում է սանդուխք դալիքի՝  
Դրոշներն են պարզում բուրաններ հրաբորբոք,  
Հայրենիքն է հաղնում երկաթ, բրոնզ ու փայլ՝  
Մեր պմեն մի օրը, ամեն ժամը հիմա  
Դեպի գալիքն է վառ, հաղթանակի մի քայլ՝  
Մեզ առաջ է մղում կամքը առաջնորդի,  
Ձեռքը նրա կարող, դեպի օրերն այն պարզ  
Եվ որպես խինդդ՝ ինչպես Չանգուն հորդի՝  
Խփի՛ր, ընկեր, մուրճդ, որ միշտ վեր բարձրանա...  
Երբ բացվում է օրը առափոռի բույրով,  
Խնդությունով լցվում է երգով աշխատանքի,  
Ես ձեզ մոտ եմ գալիս հաղաք ճամբաներով՝  
Կովի իմ դյուցազներ, իմ ընկերներ փառքի..

ՀԱՅՐԵՆԻՔԻՍ

Դու իմ հայրենիք վեհ ու դյուրթական,  
 Քո դեմքը նորից պայծառ է ժպտում,  
 Քո սրգինները քո սիրով ընկան,  
 Քո ջինջ անունը ամենքի սրտում:  
 Բացվում է օրը, և կյանք է զնգում,  
 Քո կառույցները անա վերամբարձ—  
 Օր ու իրիկուն ելնում են, կանգնում՝  
 Այնպես սրբատաշ, այնքան վեհ ու պարզ,  
 Հայրենիք, երկիր ջինջ ու լուսակերտ,  
 Մահվան ավեցինք թշնամուն քինոտ,  
 Որ դա միշտ ժպտաս մեր սրտերի հետ,  
 Մոռացած հավետ անցյալդ արնոտ:

## ԵՐԻՏԱՍԱՐԴ ՍԵՐՈՒՆԴ

### 1.

Կրկին առած բամբլո՛ւ՝ անալի մի կարոտով  
 Քեզ եմ հրգում անա, երխասարդ սերունդ,  
 Քո այսօրը պայծառ, անա իմ դեմ սիրով—  
 Դու ելնում ես, վիթթում, ինչպես զարուն  
 Երեկ կռիվ էր, մահ: Կռիվներում այդ խոր,  
 Եվ մաքտերում անեղ, հրդեհներ ըսցում,  
 Դու թրծեցիր հողիդ և կռիվեցիր, ինչպես  
 Պողպատն է միշտ կռիվում թեժ հնոցում  
 Եվ կատաղի ու գոռ շառաչներում կռվի  
 Դու ընթացար ինչպես կամքը անհաղթելի,  
 Որպես ցասման կրակ ելար խոր շառաչով  
 Թշնամու դեմ գոռոզ ու ատելի:

Եվ մերթ որպես սվին՝ դու մեխվեցիր սայրսուր  
 Կրծքում այն թշնամու, որ փորձում էր երեկ  
 Ծաղկուն կյանքդ մարել՝ սխուշով մահ, արյուն  
 Բայց դու եղար հզոր ու միշտ անթեք:

Եվ մերթ որպես ահան շառաչեցիր ուժգին,  
 Եվ պայթեցիր անեղ՝ արձակելով շինդ,  
 Ահեղ սարսափ եղար դու ոստիկ գլխին,  
 Մաքառելով այդպես անցար ուղիդ:

Այսօր անա կրկին թրծած հողիդ հրով,  
 ելել ես դու նորից վսեմ մի պայքարի,  
 Չքնաղ հայրենիքի, նրա հըղոր սիրով  
 նվաճում ես բերդերն հնգամյակի:  
 Եվ անհուն է ուժդ, ինչպես ծովը կապույտ,  
 Եվ կորովդ անմար խաբույկի սկս ըրբբոք:  
 Աշխատանքի սերն է մեզ միշտ իրար կապում,  
 Թողած մեր մանկության օրերն անհոգ  
 Եվ Սևանի ճովին և հանքերում պղնձի,  
 Այդ քո ուժն է ետում, երիտասարդ սերունդ,  
 Թող օրերի հուրը այնպես, այնպես թրծի  
 Մեր սրահը մաքուր և հրահուր:  
 Եղ՞ղուք կառուցումի մարտիկներ եք անպարտ  
 Ու հաղթում եք ուղին դեպի գալիքը վառ,  
 Ե՛վ ընթանում առաջ, և՛ ընթանում հպարտ՝  
 Մեր աղազան դեպի ջինջ ու պայծառ:  
 Եթե վաղը նորից չարագուշակ ոռնան  
 Ոստիսները այն չար, օ՛, սուրբ իմ հայրենիք,  
 Թողած դադգահ ու մուրճ, անհուն ուժով ցապման  
 Մենք կնետվինք առաջ որպես մրրկիկ:

## ՄԵՐ ՊԱՍԻՎԸ

(Նոր տարվա առթիվ)

Եվ երգում են տալիս Առաջնորդին մեր մեծ՝  
 Որդիները նրա և թոռները բոլոր,  
 Որ աշխատանքում մեր, ինչպես կռվում այն թիժ,  
 Մենք կլինենք խրոխտ ու միշտ հզոր:  
 Ահա պատիվը մեր և սխրանքը հոգու,  
 Աշխատանքի հուրը թող մեր կամքը թրծի,  
 Ինչքան դժվար լինի, մեր ուժն է միշտ հորդուն,  
 Մենք պատրաստ ենք ամեն, ամեն դործի:  
 Մենք կբուժենք բոլոր վերքերն հայրենիքի,  
 Ստալինյան ոճով՝ հնգամյակում հաղթող,  
 Որ սերունդը եկող, պայծառ մեր գալիքի  
 Ո՛չ մի հետք չաեսնի վերքերից խոր:  
 Բարձրացնում ենք ահա քաղաքները կրկին,  
 Դեպի երկինք հանում գործարաններ հսկա,  
 Հրճվում է նորից ժողովրդի ուզին  
 Այնպես ջերմ ու պայծառ ու արևկա:  
 Եվ որպեսզի աճենք ոչ թե ամեն տարի,  
 Այլև ամեն մի օր, աճենք ամեն մի ժամ,  
 Մեզ առաջ է տանում ձեռքը Առաջնորդի  
 Դեպի գագաթները վճիտ ու պարզ:  
 Ահա նորից, ինչպես կռվի թիժ օրերին,

Նրա անունն է մեզ հրով լուսավորում,  
Հիմա և այս խաղաղ ու ջինջ տարիներին  
Նա է կյանքները մեր լույսով իր արևում,  
Ահավասիկ և մենք այս նոր տարվա շեմին  
Բարձրացնում ենք բաժակ զինով լեցուն,  
Խմում Ստալինի կենացը ու գոչում.  
— Փնոք քեզ, Առաջնորդ մեր հզոր ու մեծ.

ԱՆԱ ԵՐԳԸ ՀԻՄԱ ՄԵՐ ՍՐՏԵՐԻ

Ա.

.. Դեռ տարիներ առաջ մենք եղել ենք այստեղ,  
Այստեղ, այս երկրում, ուր միշտ համատարած՝  
Ամռանը շոգ էր, տոթ, գարնանը հորդ հեղեղ,  
Ուր սին հուսերից էր մարդու բախտը կախված:  
Ուր ամենուր մահն էր սևադգեստ շրջում,  
Բախում ամեն մի դուռ անկոչ հյուրի նման,  
Եվ վաղ առավոտից մինչ գիշերն էր իջնում,  
Մահ... մահ... մահ...

Ելանք հախուռն ու հոծ, բոցում պայքարների  
Հանդուգն ու անարատն ինչպես, ինչպես հիմա,  
Մարտնչեցինք ընդդեմ ցրտի ու խավարի.  
Հանուն նորին այս նոր, ուր որ կյանքն է եռում,  
Ու բորբոքվում կյանքի անմարելի քուերան,  
Եվ արյունը վսեմ, որ մեր երակներում  
Դեռ եռում է, ինչպես այն օրերին գարնան:

Բ.

Ելանք, կառուցեցինք մեր երկիրը խինդով,  
Աշխատանքի, կամքի, հերոսության անչափ,  
Մեր գնդերով բազում և քրտինքով մեր ծով,  
Մկաններին տված նոր ուժ ու թափ,

Ստեղծեցինք աշխարհ մի նոր ու խանդավառ:  
 Այս օրերի համար եղանք մենք ահարկու,  
 Որ երկիրը լինի անհունորեն պայծառ,  
 Որ չչափվի անգամ մարդու խինդը հոգու:  
 Կոխներում անդուլ, առօրյայում այս մեծ,  
 Մենք հաղթեցինք ամեն բերդ ու արգելք,  
 Բայց թշնամին նորից նոր պատերազմ գուժեց.  
 Հողմերի դեմ վայրագ մրրկաշունչ թափով  
 Մենք նետվեցինք առաջ,  
 Եղանք լեռներ կանգուն և մեր ճակատներով  
 Ինչքան ամպեր անցան կարկառակուտակ:  
 Ծնկի եկավ չարաչք դաժան ոսոխն անարդ,  
 Նորից լազուր ու ջինջ դեմքը քացվեց երկնի,  
 Փառք քեզ կրկին անգամ, Սովետական Բանակ,  
 Որ փրկեցիր զու մեր հայրենիքը անգին:

9.

Ոսոխն ընկավ, սակայն դեռ կռիվ կա հիմա,  
 Մեր առջևում մարտեր, ապագայի ընթացք,  
 Եվ կուտակված եռանդ մկաններում բոլոր,  
 Որ ոչ սահման զիտե, և ոչ եզերք ու չափ:  
 Հիմա մարտն է ուրիշ, ուրիշ է կյանքը հիմա,  
 Դեմից ժպտում են մեզ անթիվ օրեր կայտառ  
 Եվ կռիվը այս նոր, մարտը մեր առօրյա,  
 Որ մենք մղում ենք միշտ արևաբար  
 Տազնապալից է քան գրոհն հայրենական  
 Մղված Ստալինգրադի կամ Խարկովի համար:

Այսօր մենք կոփում ենք ընթացքն ապագայի,  
Եվ մեր կամքը հիմա երգ է ու կառուցում,  
Զգում ենք դոփյունը վաղվա, որ պիտի գա,  
Մյ՛ղ մեր գալիքի արշալույսն է բացվում...  
Եվ այնքան, այնքան է պայծառ մեր ապագան,  
Որին երազում է ամեն մի մարդ անգամ,  
Կառուցումի շունչն է դարձյալ փոփում անծայր,  
Եվ մենք ուղջունում ենք շունչը այդ մարտերի,  
Եվ մեր դալիք օրը դարնան նման պայծառ,  
Ահա երգը հիմա մեր սրտերի:

ՎԵՐԱԴԱՐՁԻ ՃԱՄԲԻՆ

Այս ամերոճ մի օր եղել եմ ես,  
Որպես մարտիկ զինվոր մի հասարակ,  
Ու մարանչել, կռվել բոլորի պես—  
Բոլորի պես տեսել թահ ու զրկանք:

Ես ձեզ մոտ եմ կրկին, ծանոթ վայրեր,  
Այստեղ թնդանոթ կար և գնդացիք,  
Գրոհ ավինք այստեղ մի ուշ գիշեր—  
Եվ գյուղ մտանք մենք վաղ լուսարացին:

Մահու, կյանքի կռիվ եղավ այստեղ,  
Բազում արկեր թռան, շառաչեցին,  
Թշնամու դեմ ելանք, ինչպես հեղեղ—  
Ռազմում ընկավ դաժան գերմանացին:

Մենք հաղթեցինք, Մանոթ ճամբաներով  
Տուն եմ դառնում և ես, հազար հուշեր  
Ունեմ պահած սրտումս ու չմարող  
Մի անջինջ աղջկա չքնաղ պատկեր:


Նա քնքուշ էր այնքան և լուսերես,  
Հոնքեր ունի նման աղեղներին,  
Եվ երկու դույզ հյուսքեր, օձեր սրպես  
Իջած նրա թիկնեղ, լայն ուսերին:

Հագին ունիւր շապիկ զինվորական,  
Ունիւր հողի մաքուր արևի պես,  
— Կովից հետո, — ասաց, — մենք տուն կգանք —  
եվ հարսանիք կանենք, թե ինձ, թե քեզ:

Բայց նա ընկավ խիղախ զինվոր որպես,  
Ու չտեսավ գալիք օրը վաղվան —  
Մենք պատեցինք նրան ծաղկով պես-պես  
եվ թաղեցինք նրան:

Ահա գերեզմանը և սիրան հանգչող  
Այն աղջկա զինվոր, աղբյուրի տակ,  
Գերեզմանից առած մի բուռ սև հող —  
Տուն եմ բերում, որպես սուրբ հիշատակ:

12424  
5172  
11



## ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂ

Հող դու հայրենի, հարազատ դու մայր,  
Դու որքան հին ես և որքան գերույ,  
Ամբարում ես դու բարիք անսպառ,  
Գանձեր խոր հողու, լուսեղեն դու հող:

Դու դար ու դարեր երազ ես եղել,  
Պապերիս համար և իմ հայրերի,  
Քեզ համար ինչքան արյուն են թափել,  
Որ թոռներն իրենց չլինեն գերի:

Իսկ հիմա ահա տերը մայր հողի,  
Մենք ենք, որ թաղած զրկանք ու կարիք,  
Գտանք և՛ կորույ և՛ ուժ հաղթողի,  
Հողից հանելով գանձեր ու բարիք:

Դեռ ինչքան գանձեր կան քո ընդերքում,  
Հող դու հայրենի, հարազատ դու մայր,  
Թե չլինես դու և ոչինչ կյանքում  
Չի լինի կանգուն...

## ԻՍ ԺՈՂՈՎՐԴԻՆ

Երեկ փոխեցի գրիչս զենքով,  
 Ռազմի դաշտ ելա որպես մի զինվոր,  
 Որ պաշտպան կանգնեմ խնդությանդ ծով,  
 Եվ վհուկությանդ՝ երկնքից էլ խոր:  
 Կռիվներ եղան, ավերներ եղան:  
 Մեզ թնդանոթն էր մարտի ուղեկցում,  
 Ահեղ մարտերում հղբայրներ ընկան—  
 Նահատակվեցին վառ գարունն կյանքում:  
 Մեր նալը լողաց արյուննի ծովում,  
 Ուր մշուշ էր մուժ, ուր մահը խոցվեց,  
 Այդ թո՛հ ու բո՛հի անեղ զնպոցում—  
 Նամը հաղթանակի խաբխսխը դցեց:  
 Իսկ այսօր զենքս գրչով փոխեցի,  
 Որ փառքդ հրգեմ, իմ վին ժողովուրդ,  
 Եվ պարզ այս երգս, որ ես գրեցի—  
 Քեզ եմ նվիրում իմ սրտից անսուտ:

## ՎԵՐԱԴԱՐՁ

...Հրե օրերին բիրտ թշնամին  
Հասավ լեռները իմ հայրենի,  
Եվ որպես մահվան սառը քամի,  
Ուղեց լեռներէց դաշտերն իջնի:

Թողած մանկության այգի ու տուն,  
Անցա ծովեր ես ու ցամաքներ,  
Եվ որպես պարտքը անկեղծ որդու՝  
Թշնամու դեմ ես դարձա սուսեր:

Եվ կարոտից քո, հայրենի հող,  
Եվ սիրուց, սիրուց հայրենիքի,  
Թշնամու դեմ ես ելա անդող,  
Որպես բռունցք հաղթ ու զայրագին:

Եվ հեռուներում ցուրտ ու մոլոր,  
Միշտ քեզ եմ հիշել հայրենի տուն,  
Եվ ձմռան միջից որպես զարուն,  
Միշտ ժպտացել ես դու քո որդուն:  
Եվ պարտքս տված քեզ եմ դարձել, տուն,  
Ինչպես վայել է հաղթող որդուն:

ԾԻՐԱՆԻ ԾԱՌ

1.

Գլուհի պահին քեզ տրորեցին.

Ծան իմ ծիրանի,

Երբ ներս սողոսկեց չար գերմանացին

Մեր հողն հայրենի:

Ծաղկիդ թերթերը մեկ-մեկ ընկան վար,

Աստղերի պես վառ,

Եվ մանկան նման դառը լաց եղար,

Իմ ծիրանի ծառ:

Եվ դու մերկացար, երբ քեզ պարուրեց

Գլշերը խավար,

Երբ քեզ սանրելով քո գլխին շաշեց

Արկը հողմավար:

Եվ ես հասկացա քո սրտի լեզուն,

Երբ դու անքացիր,

Զոհված մարտիկի շիրիմի առաջ

Լուռ խոնարհվեցիր:

Բայց հիմա արդին, երբ տուն հմ դառնում  
 կաժանով այն հին,  
 ժպտում ես ահա, ծաղիկներ փռում.  
 Իմ ճանապարհին:

Այդ հրճվանքի արցունքներն են քո,  
 Իմ սիրտն են ցնցում,  
 Մոռացել ես դու վշտերդ անցած,  
 Այնպես վաղանցուկ:

Եվ հիմա դու էլ ժպտում ես, խնդում  
 Օր ու իրիկուն,  
 Քո ծաղիկները վառ աստղերի հետ  
 Խաղում են թաքուն:

Ու երբ հիշում ես  
 Չոհված մարտիկին,  
 Քո ծաղիկները արցունք առ արցունք  
 Թափվում են գետին:

## ԱՐԵՎ ՍՈՎԵՏԱԿԱՆ

Անա կրկին մեր դեմ առավոտն է բացվում,  
 Որպես հեքիաթ անուշ, որպես վառ խնդություն,  
 Մարուր օգուժ անհուն թռչուններն են ճախրում —  
 Ու ավետում նոր երգ ու բերկրություն  
 Ինչն է արդյոք այսպես կիզում սրտերը մեր,  
 Ինչն է արդյոք այնպես անափ կարոտ դառել —  
 Ուր — ամենուր հիմա ելած բաղնություններն  
 Անչափելի չափով անմար սեր են առեր:

Օ՛, սերն այդ կարոտը, խնդությունն անափ,  
 Մեր սրտերն են կիզում մի ջերմագին տապով,  
 Օ՛, առավոտ ելնող, փայլեր դու ավե-ավե —  
 Թող արևը կրկին շողա մեզ ապահով  
 Սև տարիներն անցան, ինչպես չվող թռչուն,  
 Ինչպես անհղ երազ խոլ գիշերներին,  
 Եկան օրերը այս և հուր, և շառաչուն,  
 Այդ արևն է իջել զուլալ մեր սրտերին:

Այդ արևն է թափում ջերմությունը իր լույս,  
 Մեր հողերի վրա, ու զաշտերում անձայր,  
 Ու սլարգակել մեզ կյանք, արդար հավատ և հույս —  
 Եվ գալիքներ՝ լեցուն ծաղիկներով սլայծառ  
 Որպես կանթեղ անմար կյանքն է ընդմիշտ վառվել:

Այդ արևից արդար, հրից—որ կարևեր  
Մառ դարերից մինչև ներկան այս առասպել,  
Շողշողում է մեր դեմ Արարատի սլես վին:  
Հայրենիք իմ սիրուն, ժողովուրդ իմ արդար,  
Քո լայն գիրկը բացիր այդ արևի դիմաց,  
Ինչպես կարոտ մի մայր, դ՞ուք քո սիրով անմար,  
Գուրգուրեցիր նրան հավերժ կյանքով լցված:

Աշխարհ հանեցիր մեզ քո խնդաղին սիրով,  
Արշալույսներ բերիր հազար մանուկների,  
Ու սրտերն քաղում բերիր լույս քնարով,  
Որպեսզի հար երգեն քեզ, ո՞վ արև բարի:

ԵՐԳ ԵՐԵՎԱՆԻՆ

Ի՛յ Երևան, չքնաղ քաղաք,  
 Քաղաք լուսե ու կախարդիչ,  
 Քո երեկոն ահա խաղաղ—  
 Քո երեկոն միշտ հմայիչ,  
 Եղա՛վ մի օր բաժանվեցի ..  
 Ե՛վ գնացքն ինձ տարա՛վ հեռու,  
 Քայց թովչանքդ լուսարացի  
 Մտքով ինձ քո գիրկն էր բերում:  
 Երբ հեռավոր այն փեքրո՛ւմ  
 Գնամ էր ելնում քաղաք մի նոր,  
 Ես քեզ էի սիրով հիշում—  
 Հերկաթ քաղաք իմ լուսավոր:  
 Երբ մի ուումք չարագուշակ,  
 Պալատներ էր հրի մատնում,  
 Գլխես արգյոք այդ ժամանակ  
 Նաև քեզ էի ես հիշում.  
 Ե՛վ հանուն քեզ, չքնաղ քաղաք,  
 Քանի Չահել ընկան կռվում,  
 Ընկան կռվում, արևի տակ,  
 Որ նաև դու մնաս կանգուն:  
 Քո սիրուց էլ ես նրանց պես  
 Արձակեցի հազար գնդակ,  
 Որ թշամի՛ն չհասնի քեզ,

Նվիրական չքնաղ քաղաք,  
Հիմա դարձել՝ գիրկդ եմ ընկել,  
Ժպտում ես ինձ, ժպտում եմ քեզ,  
Ախ, դեռ մանկուց ինձ հմայել,  
Փայփայել ես անուշ մոր պես:  
Նորքն եմ ելնում ես խանդավառ,  
Էլ չեմ կարող ճիշտ պահել,  
Ցածում ահա խրոխտաբար —  
Դու իս կրկին հպարտ բաղմել:  
Դեռ դու ինչքան պիտի ծաղկես,  
Փթթես պիտի, ելնես միշտ վեր,  
Եվ մի հղոր մեծ սրտի պես  
Բարախես դու դար ու դարեր:  
Ի՛մ երևան, չքնաղ քաղաք,  
Քաղաք չունես ու կախարդիչ,  
Քո երեկոն ահա խաղաղ —  
Քո երեկոն միշտ հմայիչ:

11

## ԳԱՐՈՒՆՆ ԻՄ ՆՅԳՈՒՄ

\* \* \*

Կանաչ դարունն է իջել  
Իմ փոքրիկ այգում,  
Քնքուշ ծիլերը շահել  
Թևում են թաքուն:

Ախ, թող ծաղկեն ծառերը  
Ամեն պուրակում,  
Թող մի ծաղիկ թողնի վառ  
Գարունն իմ հոգում:



Գարունն այս բացվեց վարդե համբույրով,  
 Ողջույն, իմ գարուն, ծովածուխ կանաչ,  
 Անցիր դաշտերով ծափ ու ծիծաղով,  
 Լեռներով անցիր, արտերով ճանաչ:

Արցունքներն ամսլի կցողի ծաղկանց,  
 Վարդերի բույրը դաշտերը կառնի,  
 Նորից կհնչի լեռներէց բխած—  
 Աշխույժ համերգը—խոսուն գետերի:

Ձան անրջածուխ հույզեր իմ ետուն,  
 Անձրեկք դուք էլ դարնան հետ մեկտեղ,  
 Իմ անքուն սիրտն է նորից քնարում—  
 Ողջույն քեզ, գարուն, ողջույն քեզ գարուն:

Գարունն այս բացվեց վարդե համբույրով,  
 Ողջույն, իմ գարուն, ծովածուխ կանաչ,  
 Անցիր դաշտերով ծափ ու ծիծաղով,  
 Լեռներով անցիր, արտերով ճանաչ:



Երկար շրջեցի դաշտերի գրկում,  
Ամենուր տեսա ծաղկունք խնկավետ,  
Եվ լուսաբացի հոփն էր շնոզնդում,  
Խաղընկեր դարձած ծաղիկներն հետ:

Ու երբ ետ դարձա, իրիկնամուտին  
Հոփն էր քուն մտնում ծաղկունաց ծոցում,  
Իսկ ես դեռ անհագ շրջում եմ կրկին,  
Նախանձը կարծես իմ սիրտն է կրծում:—

Մի վայրկյան միայն ես հով լինեի,  
Զեփյուռ լինեի շրջել անվերջ,  
Հողնած ետ գայի ու քուն մտնեի—  
Քո ջահել սրտի վարդաստանի մեջ:

Երկար շրջեցի դաշտերի գրկում,  
Ամենուր տեսա ծաղկունք խնկավետ,  
Եվ լուսաբացի հոփն էր շնոզնդում,  
Խաղընկեր դարձած ծաղիկներն հետ:

Գ Ա Ր Ո Ւ Ն

Վերում թողած մառախուղի կապույտ ծովն՝  
Դաշտ եմ իջնում երազներով ես արբած,—  
Շուրջս ահա շրջում են լուս շշուկով  
Աղջիկները կրակների պես շիկնած:

Սարից եկած հովերի պես հերարձակ—  
Ձեր ծամերը ծփծփում են ծանրածալք,  
Եվ իմ հողին ձեր կաքավող քայլքի տակ  
Դողում է դեռ, երգում կարկաչ և հմայք:

Կարկաչեցեք, իմ հայրենի վտակներ,  
Կարկաչեցեք ու հնչեցեք ոսկեձայն,  
Ծովի նման թող ծավալվի խինդը ձեր,  
Վեռվետացեք, իմ աղջիկներ ոսկեձամ:

Երբ անցնում եք, ձեր շուրջ գարունն է ծաղկում,  
Եվ արևը վերից խփում է ծնծղան,—  
Խոր հրճվում է ձեր ծիծաղի համերգում  
Սիրան իմ ջահել, աղջիկներ իմ ծխածան:

Ձեր կրծքի տակ կա հուլիսյան արեգակ,  
Ծովածավալ կյանք կա ու երգ, ցնծություն,  
Ձեր աչքերում անմար սիրո մի կրակ—  
Շողշողում է,—կարկաչեցեք գետի տուն:

Կարկաչեցէք ու հնչեցէք վառակներ,  
Կարկաչեցէք, կարկաչեցէք մեղմաձայն,  
Ծովի նման թող ծավալվի սիրը ձեր,  
Վետվեաացիք, իմ աղջիկներ սսկեծամ:

ԳԱՐՆԱՆ ԱՐԱԳԻԼ

Զեփյուռներն անցան՝ ծաղկունք շոյելով,  
Ժպտաց երկինքը հայացքովն իր բիւ,  
Մեր դռան բարդին կանաչ շորերով  
Սպասում է քեզ, գարնան արագիւր

Ահա բացվում են աչքերը ծաղկանց,  
Օրն է արտասվում կաթիլ առ կաթիլ,  
Մի ջերմ շուկով հովը շշնջաց.  
Նկ, ճերմակ, ճերմակ, ծանոթ արագիւր

Եվ դաշտերի մեջ, և այգում կանաչ  
Ես արագիլի թավ ձայնն եմ լսում,  
Ահա գարունը՝ բոլորիս ճանաչ,  
Որ տեսնում էինք ձմռան երագում:

Ա Շ ՈՒ Ն

Այնքան հարուստ ես աշուն, դու հարուստ ես, ես  
հպարտ,

Երբ տեսնում եմ իմ այգին հաղար երանգով,  
Խառ խալիչու պես փռված, ցողը՝ վրան աղամանդ—  
Եվ խաղողը բռնկված դինու կրակով:

Այգին փռել ես մեր դեմ հանց մրդառատ մի սինի,  
'Իս հենց կյանք է ու բաղձանք ու երգ մի հնչեղ,  
Թե մեր խինդը մի լիճ էր՝ փոխվեց անհուն օվկյանի—  
Ոսկե աշունն է լճիլ ամեն, ամեն տեղ:



Իմ աչքերը թափառում են ամպերում  
 Գիշեր լինի, թե առավոտ վարդագույն,  
 Կարոտ ու սեր վառած ջահել իմ սրտում—  
 Քեզ եմ պահում, քեզ սպասում օրն ի բունս

ես կուզեի, ախ, միշտ տեսնել քո զրկում,  
 Արևների խաղը պայծառ, հմայուն,  
 Երկու ձեռքս խրել չքնաղ մետաքսում՝  
 Քո վարտերի դանդուրներում ոսկեզույն:

Եկ, տուն դարձիր, թափառումիս լուսատու  
 Անմար կրակի Ծառերն էլ տես՝ կհեան  
 Օրորվելով, մինչև դու գաս, մտնես տուն—  
 Մինչև դու գաս, թախծոտ հողմնս հանգրվանս:

Դու ապրեցիր բանաստեղծի միշտ անհուն  
 Հոգով պայծառ ու երգերով արբեցած,  
 Երգս հիմա, տես, կցողի խնդություն,  
 Եկ, տուն դարձիր, ճամբաներով դնացած:

ՄՈՐՍ ԽՐՍՏԸ

— Լավ ընկերը, իմ որդի,  
Թանկ է եղբորից,—  
Դեռ փոքր էի, երբ մայրս,  
Խրատում էր ինձ:

— Թե ուզում ես իմանալ,  
Ընկերոջդ փորձիր,  
Նրան մի չար խոսք ասա  
Ու սրտին կպիր:

— Թե խորունկ նա լցվեց,  
Չարությամբ դեպ ընդ,  
Նա ընկեր չի, նրանից  
Միշտ կվնասվես:

— Թե կասնի խոսքը քո  
Ու ընդ կների,  
Ընկերդ նա է, որ կա—  
Կյանք մի խնայի:



Ձուլալ առուն վազում էր մեր բակի միջով,  
Թթենու տակ խայտալով ջրով սառնորակ,  
Տղաներով մեր բակի ուրախ քրքիջով—  
Խաղում էինք, լողանում առվակում հոտակի

Թթենու տակ, առվի մոտ կար ընկած մի քար,  
Մայրս նստում այդ քարին ու ինձ էր նայում,  
Եվ հրճվում իմ խաղով— սպասում երկար—  
Մինչ ես հոգնած խաղերից, գերկն էի ընկնում:

Բայց նա չապրեց, չտեսավ օրերը մեր նոր,  
Մեր այս կյանքը լուսեղեն արևով արբած,  
Դաժան կյանքը անցյալի խոցել էր շատ խոր  
Մորս սիրտը .. ու այդպես գերեզման զնաց:

Բայց երբ հիմա տեսնում եմ քարն այդ ամեն օր,  
Հիշում եմ մորս ու իմ մանկությունն անցած,  
Ես չգիտեմ՝ որտեղ է գերեզմանն իմ մոր—  
Միայն քարն այդ մնում է հուշարձան դարձած:

\* \* \*  
Կանաչները կարոտ են  
Վառ արևի շողերին,  
Բիւ ծովերը կարոտ են  
Սարից վազող ջրերին:

Վարդերը վառ կարոտ են  
Բլբուլների երգերին,  
Իսկ իմ սիրաբ, սիրաբ իմ—  
Մորս սղիղ համբույրին:



Հիմա հեռու հեռավոր իմ Հայաստանում,  
Կանաչ դարուենն է իջել արևի թևով,  
Եվ ծաղիկներն են լացվել ամեն մի արտում,  
Ու սպասում իմ դարձին անհուն մի սիրով:

Ախ, այդ հեռու հեռավոր իմ Հայաստանում,  
Մի մայր ունեմ սպասող, մի մայր ալիոր,  
Որ վշտերից կռացել կարոտը սրտում—  
Ասես դարձել է դռն ուռին սգավոր:

Ա՛խ, այդ հեռու հեռավոր իմ Հայաստանում  
Մի աղջիկ էլ սիրատենչ սպասում է ինձ,—  
Ախ, դունատ է նա հիմա, աչքերը արտում,  
Ինչպես վարդը թառամող երգի կարոտից:



Իմ մանկութեան օրերին ինչ եմ տեսել ես,  
 Սով ու կարիք եմ տեսել և մահը իմ մոր,  
 Ոտաբորիկ, գլխաբաց, անտուն որբի պես  
 Թափառել եմ դռն-դուռ շվար ու մուրր:

Մայր ունեի, կարծես թե, հսկա էի ես,  
 Մեր բակի մեջ և թաղում, աչքը բուրբի—  
 Մայրս մեռավ ու տարավ, ախ տարավ իր հետ<sup>(1)</sup>  
 Հուշերը իմ մանկական անհոգ օրերի:



Գիշեր էր կես՝ ելա քնից,  
Ասի՛ մի գամ ձեր դուռը,  
Ելա, անցա սարից, ձորից,  
Ծոցըս դրած ալ նուռը:

Լուսնյակն ելալ ամպի տակից  
Շողքը առալ ձորերը,  
Էզ երեսըդ էր, որ ձեր դռնից  
Լուսավորեց սարերը:

Անցա քոս, ճամբա ու քու,  
Ճակտիս դիպան հովերը,  
Ա՛խ, անուշ յար, ինձ թվաց թե  
Համբույրներդ են հովերը:

\* \* \*

Եկար՝ կողքովս անցար էսօր,  
Հագինդ խաս ու բալ էր,  
Կաքավի պես օրոր-շորոր  
Անցար—հագինըդ—ալ էր:

Մտիկ շարիք իմ երեսին,  
Որբադ սրտիս հուր բոց էր,  
Սև հյուսքը քո իջած ուսիդ,—  
Սև աչքերով—սև օձ էր:



Ես ձեզ զխանձ, արցունքներ,  
 Դուք ծանոթ եք ինձ,  
 Որ մերթ որպիս զոհարներ  
 Հոսել եք անբիծ:

Մեկ կարոտից եք ծնվել,  
 Մեկ էլ սիրուց վառ,  
 Այն ում սիրան է չի թախծել—  
 Սիրածի համար:

Արցունքներ, որ ծնվում են—  
 Եվ սիրուց դժբախտ,  
 Արցունքներ, որ կրում են  
 Տառապանք և խանդ:

Սակայն արցունք կա որ միշտ  
 Հոգիդ է այրում, —  
 Այդ մոր արցունքն է, երբ իբր  
 Որդուն է սգում:

Ես հիշում եմ՝ ինչքան ճամբաներ ենք անցել,  
Տափաստանների անձիր, լեռնուղիներ քանի-  
Քանի անգամ մահը մեղ վրա է շաչել՝  
Անտառներում այն մութ,

Եվ լեռներում կապույտ

Քանի քաղաք անցանք, քանի գյուղ և ավան,  
Եվ բաց երկնքի տակ քանի գիշեր անքուն՝

Մաքով թե ես, թե դու հասել ենք Երևան,

Անտառներում այն մութ,

Եվ լեռներում կապույտ,

Հանուն հաղթանակի խիզախ մենք կովեցիներ,

Սվիններով մեր սուր անցանք հերոսաբար,

Եվ մեր ճանապարհից մահը դեն հրեցինք

Անտառներում այն մութ

Եվ լեռներում կապույտ

Ինչքան հարազատներ թողինք ճանապարհին,

Ու ընկերներ անգին և հեռավոր, և մոտ,

Որոնք գնում էին, որոնք կռվում էին

Անտառներում այն մութ,

Ու լեռներում կապույտ

Ուր էլ լինենք, ընկեր, Երևանում չքնաղ,

Թե Կովկասյան այն վեհ լեռնազագաթներում,

Թանկ կպահենք նրանց հիշատակը պայծառ,

Որոնց արյան գնով կյանքը ժպտաց խաղաղ՝

Անտառներում այն մութ,

Ու լեռներում կապույտ

\* \* \*

Նորից վառվեցին լույսերն իրիկվան,  
Աստղերը բոլոր ժպտացին անքուն,  
Այդ ո՞վ է, ո՞վ է կանչում ինձ՝ «արի»,  
Ու սրտիս դուռը թափում է թաքուն:

Ա՛խ, այդ հայրենի հեռավոր երկրիս  
Հոփն էր կարծես թե, որ մեղմ շնողնդաց  
Ու մորս նման իմ ականջներին —  
«Խաղից տուն արի», — հեռվից շշնջաց:

ՄԵՐ ԿՅԱՆՔԸ ԼՈՒՅՍ Է

\* \* \*

Կրկին բացվել է կյանքի գարունը,  
կյանքի գարունը ջահել հողումն իմ,  
ե՛վ ծով է, ծով է մեր խնդությունը,  
ե՛վ գալիք օրը մեզ մտերիմ:

Մեր կյանքը լույս է և միշտ ազվուր է,  
ե՛վ միշտ չքնաղ է ինչպես մանուկ մի,  
ե՛վ նա հաղթող է և նա հզոր է—  
Ինչպես որ սերը ջահել սրտի:

Ա՛խ ինչքան քաղցր է մեր մեն մի օրը,  
Ամեն մի օրը լուսե մի դուռ—  
Մեր դեմ բացվում է, և միշտ հզոր է—  
ե՛վ միշտ կերտող է մեր կյանքը հուր:

ԱՐԵՎՈՎ ԱՐԲԱԾ

Բացվել է դարունը խնդուն,  
 Եվ կյանքը զնգում է կրկին.  
 Ի՞նչ լավ է լինել միշտ արթուն  
 Եվ զգալ օրերի հոգին  
 Եվ լսել, թե ինչպես զնգում,  
 Ծավալվում է երգը օրվա,  
 Թե ինչպես քրտինքով առնում  
 Բերդերը գալիքի, վաղվա:  
 Տեսնել, թե ինչպես է հզոր  
 Արևը նոր ծնվում հեռվում,  
 Եվ ապրել, չթողնել մեկ օր,  
 Ներկան, որ անցյալ է դառնում:  
 Եվ քայլել, ընթանալ, հոգում  
 Օրերի վառ հուրը պահած,  
 Ի՞նչ լավ է, երբ կյանքն է զնգում—  
 Սրտիդ մեջ արևով արբած:

ՈՂՋՈՒՅՆ ՔԵՉ, ԳԱՐՈՒՆ

Գարուն է, գարուն է արդեն,  
 Երգում է առուն լեզվանի,  
 Ծիլիք է արձակում հողը թեն  
 Դաշտերում կակաչ, վարդենի:

Ծառերը ժպտում են, խնդում,  
 Գարուն է, շնչում են սրտանց,  
 Իսկ վերջին ձյունը տենդում է  
 Արևի շողերի դիմաց:

Ինչ լավ է ամեն առավոտ,  
 Երբ օրն է քնից արթնանում,  
 Լսել հորովիլը ծանոթ—  
 Հայրենի անափ դաշտերում:

Ողջունել գարունը հանդում  
 Ու տեսնել ցորենը նրբին,  
 Ինչպես է թևում ու ելնում,  
 Երբ ժպտում է նրանց վառ արիին:

Գարուն է, գարուն է մեր դեմ,  
 Ամեն ուր կանաչ ու ծիլեր,  
 Ամպերն անձրևում են թեթև,  
 Ողջնւյն քեզ, գարուն բարեբեր:

ԱՆԱՆՈՒՆ

Արևի շողերը հրակ,  
Ձգվում են թիլ-թիլ,  
Ինչ լավ է օրերում այս տաք  
Արևի հետ շրջել:

Եվ լինել դաշտերի գրկում,  
Եվ ամեն առավոտ—  
Լսել, թե ինչպիս է դնում  
Հորովելը ծանոթ:

Տեսնել, որ դարթնում է օրը  
Եվ կյանքը անմառախուղ,  
Զգալ և ապրել բոլորը—  
Առավոտ կանուխ:

\* \* \*

Խնդութիւնն է ապրում իմ հողին,  
 Երբ տեսնում է օրերն այս կրկին,  
 Կառուցում է տեսնում և շփնդ,  
 Եվ խոնջանք, մաքառում, երգ ու խինդ,  
 Երբ օրը ելնում է դեպի վեր —  
 Ամենուր աշխատող բյուր ձեռքեր,  
 Երբ տեսնում է ահա և գյուղեր,  
 Քաղաքներ, քաղաքներ, քաղաքներ,  
 Բարձրացող ու ելնող ու կրկին  
 Խնդութիւնն է ապրում իմ հողին։

\* \* \*

Եվ այսօր իմ սրտում դարուն է,  
Բացվում են իմ սրտում նոր վարդեր,  
Հույզերի իմ գեղը հորդում է,—  
Հնչեցեք դուք կրկին, իմ երգեր:

Եվ այսօր ես կրկին ձեզ մոտ եմ,  
Հայրենի իմ օջախ և իմ տուն,  
Եվ այս ինչ չքնաղ առավոտ է,  
Որ բացվեց, որ բացվեց իմ սրտում:

Եվ ահա մեր դաշտերը կանաչ,  
Ուր բացվում են կակաչ ու վարդեր,  
Ողջ՞ույն ձեզ, սեզ լեռներ իմ ճանաչ,—  
Իմ սրտում արթնացան բյուր հուշեր:

Եվ այսօր իմ սրտում դարուն է,  
Բացվում են իմ սրտում նոր վարդեր,  
Հույզերի իմ գեղը հորդում է,—  
Հնչեցեք դուք կրկին, իմ երգեր:

ՆՆՋԻՐ ԴՈՒ ԽԱՂԱՂ

Դու իմ Երևան, հայրենի իմ տուն,  
Ննջիր դու խաղաղ գիշերում այս խոր,  
Իսկ ես կնստեմ, կնստեմ անքուն  
Եվ իմ երգերով քեզ կասեմ օրոր:  
Դու հանդստացիր, դիտեմ որ պիտի  
Վազը ընթանաս ճամբերով քո նոր,  
Տնծում է ահա սիրտը պոետի,  
Երբ տեսնում է քեզ հաղթ ու լուսավոր:

Դու, իմ Երևան, հայրենի իմ տուն,  
Ննջիր դու խաղաղ գիշերում այս խոր:

## ՀԱՆԴԻՊՈՒՄ

Կայարանը ահա աղմկոտ,  
Հանդիպում, Համբույրներ սիրատենչ  
Պառնվել են իրար և կարոտ,  
Եվ արցունք: Հողու խինդ անվերջ:

Հանդիպել ենք իրար, Լուռ ու մունջ,  
Չես խոսում, չես լսում ոչ մի ձայն,  
Արցունքներդ են միայն, որ անվերջ—  
Հոտում են, ինչպես որ այն ժամին բաժանման:

\* \* \*

Երբ անձրևն է աշնան աղմկում,  
Եվ քամին է անցնում բաց դաշտով,  
Այստեղ ումք, այնտեղ արևն է սլայթում,  
Այստեղ մահն է շրջում շուկով:

Բայց ես ինձ երջանիկ եմ զգում,  
Թող քամին և՛ ումքն էլ ոռնան,  
Երբ դու կաս, ապրում ես այս կյանքում —  
Ինչպե՞ս ես երջանիկ ինձ չզգամ:

ԿԱՆՉՈՒՄ ԵՆ

Այն ո՞վ է կանչում ինձ, կանչում են,  
կանչում են ձեռքեր ինձ դեպի տուն  
Այդ քո երգն է ահա հնչում—  
Երևան իմ, հայրենի իմ բուն

Կրակ ես, ու հուր ես, հրակեզ,  
Միշտ վառ ես, հզոր ես և այրող,  
Ջահել սիրաս տենչում է ահա քեզ.—  
Մանկություն, Երևան սսկեշող

ԱՅՆՔԱՆ ԼՈՒՍԱՎՈՐ

Լուսաբաց է, ե՛վ սիրտս անա  
Ողջունում է կարոտը քո նոր,  
Երեան իմ, քաղաք իմ անմահ,  
Ու այնքան, ու այնքան լուսավոր:

Ե՛վ քո դեմքը անա լուսագեղ  
Ե՛վ մաքուր կ' լճիտ, հմայիչ,  
Մի երգ է, որ կարծես միշտ հնչեղ  
Զանգի պես դողանջում է աննինջ:

Գ Ա Ր Ո Ւ Ն

Հալքի թևով եկար կանաչ գարուն,  
 Մանուշակի աչքով մեզ ժպտացիր,  
 Դաշտում երգեց նորից պլմաստ առուն,  
 Ուրախության գարուն—  
 Անուշ գարուն:

Եկար ու բերիք այնքան ծանոթ  
 Հորովելը գարնան աշխատանքի,  
 Հայրենական հողում այս առավոտ—  
 Արեգակը մաղեց առատ ոսկի:

Գարուն, եկար, բերիք խինդ ու ժպիտ,  
 Ծիւ ու ծաղիկ բերիք մեր դաշտերին,  
 Ծաղկեց ձմռան այդին այնքան վտիտ,  
 Քո համբույրից քնքուշ—  
 Գարուն անուշ:

ԵՐԳ ՏԱՐԱՍԻ ՄԱՍԻՆ

1.

Ուկրախնական առաւիտ,  
 Ու խոր երկինք փիրուզե,  
 Դուք իմ սրտում արեոտ,  
 Դարձել եք երգ ու հույզեր:  
 Ուկրախնական ջրեր հորդ,  
 Անցնում եմ ես, իմ սրտում  
 Պահած անդուսպ մի կարոտ,  
 Ու հարցնում զվարթուն.  
 —Ասեք, տեսել եք նրան,  
 Այն երգասաց Տարասին,  
 Երգը սահել է արդյոք  
 Ձեր սլաղալաջուն երեսին:  
 Եվ ջրերը արծաթե,  
 Հնչում են ու կարկաչում,—  
 «Տարասի երգն է արդեն  
 Մեր ջինջ սրտում դեռ հնչում:  
 Նրա երգը, երգը անխ,  
 Հարազատ է մեր հոգուն,  
 Եվ կարոտով, և ուրախ,  
 Պահում ենք այն մեր սրտում»:

Ու ես անցնում եմ սիրով՝  
 Դաշտերում շեն ու դեղձան,  
 Լույս հասկերը մեղմ երգով՝  
 Օրորվում են ցիրուցան:  
 Ոսկե հասկերը հղի,  
 Շռայլագին ու բերրի—  
 Քամած սերը սև հողի,  
 Շշնջում են ինձ լարի:  
 Եվ ես անհուն սիրով ջինջ  
 Հարցընում եմ, — ոսկեղեն  
 Հասկեր, տեսել եք երգիչ  
 Մեր Տարասին հանձարեղ:

— Ա՛խ, ինչպե՞ս չէ, ինչպես, անխ,  
 Լսել ենք երգը նրա,  
 Եվ հիշում ենք միշտ սիրով  
 Եվ կարոտով և՛ ուրախ .  
 Աչքերը գույգ կրակ-բոց,  
 Հիշում ենք մենք մի ժպիտ,  
 Որ բոցում էր ամեն գոց,  
 Ամեն, ամեն տխուր սիրտ:

Ու երբ գիշերն է իջնում  
 Եվ աստղադարդ և պայծառ,  
 Գիշերվա երգն է հնչում

Տախտատանում մեր անձայր,  
 ես ասողերին եմ դիմում,  
 Դիմում եմ ջինջ երկնքին.  
 —Արդյոք դուք է՞լ եք հիշում  
 Տարասին մեծ ու անզին.  
 Դուք է՞լ լսել եք նրա  
 Երգը վճիտ, հեռակա,  
 Ու ձեր սրտին, ձեզ վրա  
 Թողեց երգից մի վկա:  
 Ու երկինքը լուսադարդ  
 Իմ դեմ ասողեր է թափում,  
 Այդ ասողերը ամեն մարդ—  
 Որպես երգ է ընդունում:  
 Այս ասողերի պես պայծառ՝  
 Տարասի երգն է հնչել,  
 Նրա երգը ջերմ ու վառ՝  
 Մեր սրտերին է իջել:

4.

Հողիս մի դուռ է բախում,  
 Կարոտագին ու սիրով,  
 Իսկ իմ սիրտը բաբախուն —  
 Ապրում է վառ մի երգով:  
 Տարասի երգն է չքնադ,—  
 Ողջունում է ինձ դո՛նից,  
 Ու կարկաչում է ուրախ.  
 —Նկար այցի ինձ նսրից:

Եվ ես կարծես խնդադին  
Հարցընում եմ սրտով վարդ,  
— Ո՞ւր է ապա այն անդին  
Իմ Կորզարը միշտ զվարթ:

— Ես եմ Կորզարը, հենց ես,  
Ողջունեց երգը անշեջ,—  
Ու վառեց շող հրակեղ՝  
Իր վառ քուրան սրտիս մեջ:

5.

Երբ Ուկրաինան եմ հիշում  
Տափաստանները անծիր,  
Ու արաները այն խշշուն,  
Եվ ջրերը կաթնածիր  
Ու հասկերը ոսկեվարս,  
Ու նրանց երգը ուրախ,  
Դեմս ելնում է Տարասն՝  
Գլխին դրած մի փափախ:

## ՀԱՆԴԻՊՈՒՄ

ԸՆԻ ՊՈՆՏԻ

Քեզ հանդիպեցի կրկին այս գիշեր,  
Այդ ի՛նչ հրաշքով դու վերադարձար—  
Եվ արթնացրիր, ախ, անթիվ հուշեր—  
Ախ, անթիվ հուշեր իմ հոգում պայծառ  
Թվում էր, թե դու անդարձ զնացիր  
Անունդ թողած տխուր մշուշում,  
Կարոտիս աչքը քո վերադարձի—  
Քո վերադարձի ճամբան էր պահում,  
Եվ դու եկել ես հեռուններից տուն,  
Անմահ կրգերի լուրթ ճանապարհով,  
Ինչքա՛ն էի քեզ սպասել արթուն—  
Սպասել արթուն խորին տագնապով,  
Հրճվանքից այնպե՛ս խնդաց իմ հոգին,  
Ուղեցի գրկել քո գլուխը բաց,  
Ուղեցի փարվել, ավաղ, իմ կրծքին—  
Քո «Հացին երգը». Քս սիրտը մնաց

ԲԱՆԱՍՏԵՂԾՆ ՈՒ ՇՈՂԸ

1.

Հին օրերից հասել է մեզ  
Մի այսպիսի լեզենդ,  
Որ եղել է մի բանաստեղծ—  
Ու մի արքա էլ խենթ:

Երգել է այդ բանաստեղծը,  
Մարդու սերը խնդուն,  
Իր երգերում՝ հյանքում մեծը՝  
Համարել է մարդուն:

Երգել է նա ժողովրդի  
Հողին խորն ու վսեմ,  
Երգել է նա ամեն սրտի  
Ջարին ու սերը լուսի:  
Տառասպանքն է երգել՝ մարդու,  
Հողին վշտերի ծով,  
Ու զինվորին՝ ընկած մարտում  
Պաղ նիզակի զարկով:

Բայց իր կյանքում բանաստեղծը  
Չէր գոլում արքային,  
Արքան դսպած դայրույթն անեղ՝  
Դիմում է պոետին.

—Դովիւր դու ինձ ու իմ փառքը,  
Գանձեր կտամ ես քեզ,  
Դովիւր դու իմ շքեղ կյանքը—  
Փառաբանիւր դու մեզ:

Բանաստեղծը հոգով տրտում  
Խորհում է լուռ, խոկում,  
Եվ դգում է, որ իր սրտում  
Ծանր ցավ է չորում:

—Արքա, մեծ ես, գլխում ես այդ,  
Դիտեմ, որ դու տեր ես,  
Եվ շքեղ է պալատդ արդ—  
Բայց չեմ գոլի ես քեզ:

—Դրսում հաղար մանուկ ու ծեր  
Ու տառապանք դարհուր,  
Նրանք սոված բոբիկ ու մերկ  
Զունեն ոչ հաց, ոչ ջուր:

—Լսիւր,—գոչում է նա այնժամ՝  
Արքան չար ու կրակ.  
Դահլիճն ահա, նենգ ու դաժան  
Ներս է մտնում արագ:

. . . . .  
. . . . .

Եվ ամեն մի պայծառ գիշեր,  
 Երբ լուում է քամին,  
 Երբ երկինքն է թափում աստղեր—  
 Տխուր շերեմներին:

Պոետի ջինջ սիրտն է ելնում  
 Ու սավառնում անթև,  
 Ամեն խրճիթ ու տուն մըտնում,  
 Որպես լուսե պարզև:

Ու շըրջում է նա տընեաուն՝  
 Մինչև արևածագ,  
 Մերթ բերում է նա տըխրություն,  
 Մերթ էլ պայծառ բերկըանք:

Ու երբ լույսը բացվում է լուռ,  
 Արեգակի հըրից,  
 Դուրս է ելնում սիրտը տըխուր,  
 Խոնավ խըրճիթներից:

Հողաթումըն է գրկում կրկին  
 Բանաստեղծն իր վես,  
 Ու գուրգուրում է քնքշագին,  
 Իր սիրածին որպես:

Ու մայր հողն է գորովագին  
 Պահում սիրով հըրակ,  
 Բանաստեղծին անմահ պահում—  
 Անմահ արևի տակ:

ԵՐԳՁԻ ՁԱՅՆԸ

1.

Արքայական պերճ պալատում,  
 Բեֆը թնդում էր զիւ,  
 Ու արքայի դժօխք սրտում  
 Կար խնդություն մի բիւ:  
 Արքան բաղմեյ էր իր զանին,  
 Աչքերը՝ խոր խցեր,  
 Մանկավիկները հանուն շահի  
 Լիզում՝ ոտ ու ձեռքեր:  
 Եվ հրճվում է արքան դաժան՝  
 Գաժան սև մահի պես.  
 Մոտենում է նրան այնժամ —  
 Մեկը սավերի պես:

Մոնարքն ինքն է յոթը անգամ,  
 Լիզում զեալին ու զահ,  
 Իսկ արքայի սիրտն ազան,  
 Հրճվում է լուռ ահա:

—Ով տիրակալ, փառքիդ համար  
 Եթդ եմ հյուսել—մի երդ,  
 Թող աշխարհում քոնից երկար  
 Կյանք չլինի երբեք:

—Ոյ մեծ արքա, թող որ կարդամ,  
Լսեն բոլորը թող,—

Որ քո փառքը դարեր անգամ  
Փայլի որպես մի շող

Ասում է նա կերկերաձայն,  
Ու խոնարհվում կրկին,

Իսկ արքայի որսում անձայն  
Տենչն էր վառվում փառքի

Ու ցնծում է արքան, խնդում,  
Իմում հպարտորեն,—

—Կարդա, կարդա, թող պալատում  
Երգդ հնչի նորեն

Ու կարդում է սավերը սե,  
Երգը ստով դրած,

Իր արքայի փառքն է հյուսել,  
Փառքը երբեք չհղած

Արքան ժպտում է մեղմարար,  
Օ, նա այնքան է գոհ,

Որ սարքել են փառքի նախար  
Չքնաղ մի երեկո

2.

Յակայն այլիկը արքայի

Ցավեր ունեք շատ խոր,

Նա դժգոհ էր մեծ պալատի

Երգչի երգերից չոր

Նրա երգը ահա՛ ջ ծակող

Էլ չէր հուզում իրան,  
 Սիրո տենչը սրտում վառվող  
 Տանջում էր միշտ նրան:  
 — Հայրիկ, — ասաց աղջիկը լույս,  
 — Կարոտ եմ ես կրգի, —  
 Որ նա բերի և սեր և հույզ  
 Իմ այս մատաղ կյանքին:  
 Երգ եմ ուզում, մի երգ քնքուշ,  
 Մոտիկ, մոտիկ հուզուս,  
 Կամ այդպիսի մի սիրտ անուշ,  
 Որ տա հոգուն իմ լույս:  
 Ասաց աղջիկը ու լոկոյ,  
 Շիկնեց վառ վարդի պես,  
 Ասես սիրտը թեին տվեց  
 Երգող արտուտի պես:  
 — Լավ, — շնչաց հայրը մոռալ,  
 Նայեց աղջկան խեթ,  
 Ու մի ժպիտ դեմքին անփայլ  
 Շողաց, մարեց անհետ:  
 Կանչեց արքան, կանչեց բոլոր  
 Բը պալատի մարդկանց,  
 Եկան ամենքը գլխիկոր  
 Արքան այնժամ թնդաց:  
 — Ընկեք աշխարհ ու ման եկեք  
 Գտեք երգչի մի նոր,  
 Երգը լինի թող անեղերբ,  
 Անմահ ու փառավոր:

— Այնպես երգի երգիչը այդ,  
 Որ վարդերը բացվեն,  
 Շատրվանները իմ արծաթ,  
 Սառեն ու քար կարեն:  
 — Այնպես երգի երգիչը այդ,  
 Բլբուլները լոեն,  
 Արծիվները վեն ու հսկարա  
 Սեգ ծերպերից իջնեն:  
 — Այնպես երգի երգիչը այդ,  
 Վարդեր թափվեն բերնից,  
 Որ աղջիկը իմ հարազատ  
 Ծաղկի նրա երգից:  
 — Դե՛, դնացեք, ընկեք աշխարհ,  
 Բերեք այդ մեծ երգչին,  
 Որի երգը իմ աղջկա  
 Սրտի լարին դիպչի:

3.

Ու աշխարհի ամեն ծայրից  
 Եկան բազում երգիչներ,  
 Ու երգեցին...  
 Սակայն նորից  
 Լույս աղջկա սրտով չէր:  
 Անցավ ամիս, անցավ տարի,  
 Եկան անթիվ երգիչներ,  
 Ու պալատում մեծ արքայի  
 Երգն էր թնդում ողջ գիշեր:

Բայց ախուր էր աղջիկը լույս,  
Տխրաթախիժ ու մռայլ,  
Չկար մի երգ, չկար մի հույզ,  
Որ հոգուն տար մի նոր փայլ:

4.

Ու մի օր էլ սլալատ մտալ,  
Մի պատանի փոշոտ,  
Շատ երգիչներ այնտեղ դտավ  
Նոտած հեռու ու մոտ:  
Արքան խմբեց իր պարտիզում  
Երգիչներին ամեն,  
Որպես սրտի շոայլ զեղում  
Թնդաց երգը նորեն,  
Չերթը հասնում է սլառանուն  
Ներս են բերում այգի,  
Ու այդ սլահին ասես անհուն  
Մոլ է դառնում հոգին  
Ու արքայի աղջիկը լույս  
Նստած այգում զմբուխտ,  
Կարոտագին ու սրտահույզ,  
Փնտռում էր երգ մի լուրթ:  
— Երգիր ապա, ով սլառանի,—  
Ասաց արքան մռայլ,  
Երգիր, ձայնդ երկինք հասնի,  
Երգդ լինի շոայլ:  
Ահա երգեց պատանին վառ,

Նրա երգը սիրա էր հուզում,  
 երգեց սիրով ու խանդավառ,  
 Սրտից նրա երգն էր հոսում:  
 Թռչող հովերը կանգնեցին  
 Քաղցրադաշտայլ երգից նրա,  
 Վարդերն, անուշ թերթեր քայլին  
 Անուշ-մեղուշ երգից նրա:  
 Բլբուլները խառ սպարտեղի  
 Քար կտրեցին երգից նրա,  
 Ուռիները ջինջ երաղի  
 Օրորվեցին երգից նրա:  
 Շատրվանող ջրերն ալմազ  
 Քար կտրեցին երգից նրա,  
 Ու ամպերը արագավազ  
 Լուռ կանգնեցին երգից նրա:  
 Իսկ արքայի աղջիկը վարդ  
 Հուզված լալիս էր, հեկեկում,  
 Դժնատեսիլ արքուն հպարտ  
 Լսում էր լուռ ու խոր խոկում:  
 Ու երգում էր վառ սրտանին  
 Արգը նրա սիրտ էր հուզում,  
 Սիրադաշտայլ այդ սրտանին  
 Անմահ սիրո երգն էր հյուսում:  
 Խփեց, խփեց սաղի սիմին,  
 Դաշտայլագեղ վառ սրտանին,  
 Ասես խաղ էր անում քամին  
 Այդ ոսկելար սաղի լաբին:

Երդեց երդիչը պատանի,  
 Երդեց երկար ու երկար,  
 Ու աղջկա մեջքին սիրո  
 Կապեց սուկե մի կամարս  
 Վէջովախ նրան՝ ով վիշտ չունի,  
 Արցունք չունի, լաց չունի,  
 Էն որ լեռն է, որ բուք չունի,—  
 Ու սուգ չունի, ձյուն չունի:  
 Ապառաժ լեռն աղբյուր ունի,  
 Քար սիրտն է, որ սեր չունի,  
 Էն հում սիրտն է ծիծաղ չունի—  
 Անմահ սիրո շեր չունի:  
 Էն հում սիրտն է Ֆինջան չունի,  
 Գինի չունի, թաս չունի,  
 Սեր հեքիաթը վախճան չունի—  
 Ծով դարդերից մաս չունի:  
 Երանի քեզ, ով արդար մարդ,  
 Որ լսում ես երգը հին—  
 Ու չես տեսնում սրախ հպարտ,  
 Դարանակալ վերքը հին:  
 Սիրո դունից ներս հնք մտել,  
 Էլ հետ դառնալ չկա մեզ,  
 Եկեք սիրով թատեր խփենք  
 Լավ սրտաբաց եղբոր պեսս:  
 Ու հիացած ամբոխը լուռ  
 Լսում էր լուռ ու լարված,  
 Եվ բորբոքեց անթիվ սրտեր

Երգիչը վառ սիրապանծ,  
Ու լսում էր աղջիկը լույս,  
Ասես սիրտն իր բովանդակ,  
Ելել մտել էր սիրահույզ,  
Վառ պատանու կրծքի տակ,  
Եվ արքան էլ ձայնից երգչի,  
Խորը հուզվեց ու ժպտաց,  
Ասես լեռան խոժոռ լանջին  
Մի բարակ լույս շողշողաց:

• • • • •  
• • • • •

Մնա այստեղ, իմ պալատում,  
Եղի՞ր երգիչ պալատական,  
Քեզ կտամ դանձ, կտամ քեզ տուն,  
Ասաց ժպտաց գոռոզ արքան  
Իմ աղջկան ու ինձ գովիր,  
Գովիր երգով փառքը դու մեր,  
Ապարանքն իմ ահա, նայիր,  
Տալիս եմ քեզ, որպես նվեր:  
— Ով դու արքա, հզոր արքա,  
Գիտեմ մեծ ես ու իմաստուն,  
Բայց իմ սիրտը, երգս վկա,  
Ազատություն է միշտ սիրում:  
— Կտամ ես քեզ պալատ ու բերդ,  
Բերդն ու պալատը սակեկուռ,  
Ու իմ դանձերը նրա հետ  
Ու այդին իմ ականակուռ:

— Ո՛վ դու արքա, հզոր արքան,  
Գիւեմ մեծ ես ու իմաստուն,  
Սակայն հողիս, երկիրնք վկա,  
Զգտում է միշտ հայրենի տուն:

— Այդ էլ քիչ է. ես քեզ կտամ  
Որսասարեր եղնիկներէ,  
Որ քո երգով ամեն անգամ  
Գովես փառքը քո արքայի:

— Ո՛վ դու արքա, հզոր արքա,  
Գիւեմ մեծ ես ու իմաստուն,  
Բայց իմ երգը արե վկա  
Միրում է սուրբ ճշմարտութուն:

— Լո՛իր, — գոռաց արքան դաժան:  
Զնդան նետել սրան իսկույն,  
Խոսել իմ դեմ անբարտավան  
Արքայական իմ պալատում:  
Ու քարացավ ամբոխը լուռ,  
Ասես հանկարծ կայծակ շաշեց,  
Իսկ պատանու սրտում մումուռ,  
Ցավը չոքեց սև, արամահեծ:

Ծ.

• • • • •  
• • • • •  
Նորից ցնծում ու թնդում է  
Մեծ պալատում երգ ու պար,  
Իբր արքային է ներբողում

Երգիչը հին բժնաբար,  
 Դարձել էր տուն արքան կովից  
 Պարտված հոգով ու տրտում,  
 Ու բազմել էր գահին նորից  
 Անթիվ խոհեր իր սրտում:  
 Արև աղջիկն է մոտենում  
 Արքա հորը տխրագեմ.  
 — Հայրիկ, հայրիկ, շատ եմ տրտում  
 Տարին անցել է արդեն, —  
 Թող որ լսեմ այն երգչին,  
 Որ դնդանում ես պահել,  
 Թող այդ լինի երգը վերջին —  
 Մատաղ սրտին իմ վայել  
 Մռայվում է երկնքի սեռ  
 Հայրը դժոխք սևասիրտ,  
 Եվ աչքերը հնոցն ինչպես —  
 Առկայծում են անհանգիստ  
 — Հայրիկ, հայրիկ, — ասաց աղջիկն,  
 Ընկավ գիրկը դաժան հոր,  
 Ասես շողուն աստղը վերջին  
 Երկնից ընկավ մի մութ ձոր:  
 — Բերեք նրան, բերեք այստեղ,  
 Գու սրտաց չար արքան,  
 Մանկավիկները խոնարհվեցին,  
 Խոնարհվեցին յոթ անգամ:  
 Ու պալատ է մտնում նորից.  
 Զահել գուսանը տրտում,

Խնթ նայում է արքան վերեց  
Արքան սխը իր սրտում:  
— Երգիւր փառքն իմ, երեկ կովում  
Խորտակեցի անթիվ դահ,  
Երգիւր, երգիւր այս աշխարհում,  
Որ կա արքա մի անմահ:

— Ոչ, հայրիկ, ոչ, նա թող երգի  
Ուլած երգը իր սրտի,  
Ասաց աղջիկը ու կրկին  
Փարվեց հորը կաթոգին:

Ու երգում է ցավերով լի  
Վշտոտ սրտից մի նոր երգ,  
Ու լսում է արքան էլի,  
Ողջ դահլիճը նրա հետ:  
Ընդդվում եմ ես, ով մեծ արքա,  
Կույսով պայծառ երկնքի,  
Եվ ծաղիկներ դուք արեկա,  
Ականջ դրեք իմ երգին:  
Եվ ինչ երգի մատաղ հոգիս,  
Ճշմարտություն է դա լսի,  
Խորախորհուրդ միտքը երգիս  
Թող հասկանա ամեն ոք:  
Ասաց երգիչն ու իր սրտի  
Սազին խփեց ոսկելար,  
Ու թնդացին մեծ պալատի  
Կամարները սյունաշար:

Վ՛ր արքա է կոչել հնում,  
 Մի արքա չար ու դաժան,  
 Մահ զորությամբ էր նա իշխում—  
 Հանց սև արևն անարժան,  
 Պայծառությունն էր խավարել  
 Մեծաքսաթել վարդերի,  
 Նուրբ ծաղիկները թառամել  
 Կարոտ սիրող սրտերի:  
 Իսկ ուղտերի քարվանները  
 Բերում էին հանց անչափ,  
 Պալատական ամբարները  
 Լցվում էին ավից-ափ:  
 Եվ ուղտերի քարվանները  
 Կրում էին մեղր-կարագ,  
 Արքայական սեղանները  
 Չոքում էին նրանց տակ:  
 Եվ ուղտերի քարվանները  
 Բերում էին խառ-դումաշ՝  
 Արքայական պալատները  
 Չարդարելու ոսկե նախշ:  
 Եվ ուղտերի քարվանները  
 Բերում էին վարդի յուղ,  
 Որ արքայի բյուր հարճերը  
 Բուրեն անուշ վարդաբուխ:  
 Եվ ուղտերի քարվանները  
 Բերում էին ամբար մուշկ,  
 Որ արքայի գառ շորերը

Օձվեն յուղով միշտ անուշ:  
 Գալիս էին քարվանսերը  
 Ամեն ծայրից աշխարհի,  
 Եվ արքան էլ կյանքի տերը  
 Արքան անի ու մահի:  
 Բայց եղել է մի բանաստեղծ  
 Թուխ մազերով սև սաթի,  
 Որ ըմպել է սրածով անկեղծ  
 Իմաստութեան յոթ կաթիլ:  
 Եվ նա գիտեր հեռունների  
 Գաղտնիքների հոգին վես,  
 Գիտեր անթիվ նւրբ սրտերի  
 Ցնորքները սիրակեղ:  
 Նա երգում էր աղջիկների  
 Անմահութեանը վսեմ,  
 Նա երգում էր արծիվների  
 Անմար թռիչքը լուսե:  
 Ու ճաշակել էր դառնութեան  
 Բանաստեղծը իմաստուն,  
 — Ձէ. էլ չկա արդարութեան, —  
 Առել է նա՝ մտել տուն:  
 — Դուրս չեմ գա ես իմ խրճիթից  
 Մինչև ամպերը անցնեն,  
 Առել է նա սրտի խորքից՝  
 — Մինչ արքաները անցնեն,  
 Այդպես անցան շատ տարիներ  
 Ու տարիները անցան,

Մինչ բանաստեղծը կըրջիր  
Նրզն իր արած ծխածան  
Արծվաթռիչ նրա հողին  
Ձգտում էր վեր, շատ հեռու...  
Մեծ աշխարհի իմաստության  
Դռներից ներս մտնելու,  
Որ ոսկեպատ կամարների  
Լույսերի տակ թափառեր,  
Ու գոյության ոսկեբառի  
Սահմանումները գտներ  
Ծով-ծովի մեջ ահա հողին  
Բանաստեղծի ինչպես ջահ,  
Ու երկինքը երկնքի մեջ  
Նրա հողին անվախճան,  
Եվ բանաստեղծը իմաստուն  
Մտորում էր տարիներ,  
Դանել կշեռքն արդարության,  
Չափել անմար հողիներ  
Եվ նա դտավ—ու նա չափեց  
Իմաստությամբ հանճարեղ  
Մարդու հողին, ուրաք չափեց  
Եվ արցունքները հեղել  
Սրդարությունը նա չափեց  
Ու ախրությունը դժոխք,  
Ու արևի լույսը չափեց—  
Իմաստությամբ իրեն լոկի  
Իսկ դու արքա, որ իմ դիմաց

Բաղմել ես դու վեհաշուք,  
 Կարողացա՞ր արդյոք չափել  
 Մարդկանց կյանքն այս անշուք:  
 Օ, ոչ, արքա, ժողովուրդդ  
 Դողում է արդ հանց տերև,  
 Դու չես կարող չափել հոգու  
 Իմաստությունը արև:  
 Խորհուրդները քո մաքերի  
 Դառն են, կծու, դառնախոց,  
 Ինչպես վխտող սև օձերի  
 Դաժանադառը Փշրշոց:  
 Դու իշխում ես դահլիզ վրա  
 Ուժով մահի ու սովի,  
 Իսկ բանաստեղծն անմահ է, կա  
 Վառ շողերով արևի:  
 Արքան երգչի երգից գերված  
 Լսում էր լուռ, դլխիկոր,  
 Իսկ երգիչը սաղը լարած  
 Հնչեցրեց երգ մի նոր:  
 Ու թվում էր ժանտ արքային,  
 Որ պատանու երգից հոր,  
 Մարդու հոգում ու սրտերին  
 Չառ ծաղիկներ ելան նոր:  
 Ու թվում էր դեռ արքային,  
 Որ երգից այդ քաղցրաձայն,—  
 Անապատի, անտառների  
 Առյուծները մտա եկան:

Ու թվում էր արքային դեռ  
երդը աշխարհ է առել,  
երգից անուշ բյուր արծիվների  
Ծերպերից են վայր իջել:

. . . . .  
. . . . .

— Լուր, — գոռաց արքան մեկին,  
Լուր, ով դու խելագար,  
Ու հարձակվեց մոայլորեն  
Հանց վանդակից պոկված վազր:  
Փղի առաջ քեզ կնեռեմ,  
Ու մոնչաց նա անեղ,  
Իսկ աղջիկը արքայի դեմ  
Փռեց մագերը հեղեղ:

— Ով բարի հայր, հայր իմ հողի,  
Թող սիրած իմ պատանուն,  
Ախ, թող երգի, էլի երգի,  
Թող ես աղբեմ աշխարհումս:  
Հայր իմ, սիրտս է նրա սրտում,  
Հայր իմ օգնիր, ինձ, օգնիր,  
Իմ հողին է նրա հողում,  
Հայր իմ, ներիր, ինձ ներիր:

— Լուր, — գոռաց հայրը մեկին,  
Լուր դու էլ խելագար...  
Մինչ ամբոխը կխառնվիր,  
Տղան չկար ու չկար:  
Գուրս է փախչում երգիչն անհետ

Զայրույթը սիրտն է ուտում.  
— Դտնել նրան աղջկաս հետ  
Ու գլխատել պալատում:

6.

Դուրս են թռչում մանկավիճիկներն,  
Պալատական ամեն մարդ,  
Ման են գալիս աշխարհն ամեն,  
Ման են գալիս անընդհատ  
Ման են գալիս ու չեն գտնում  
Իմաստասեր պատանուն,  
Դարեր անցած դառնում են տուն,  
Արքա չկար պալատում:  
Իսկ ժողովուրդը իր սրտում  
Երգչին պահում է անմահ,  
Հեյ, անցյվորներ, հում եք փնտում  
Նա է արքան, ունի զան:  
Եվ քանի կան լեռները լուրթ,  
Լյառն Արարատը մեր կա,  
Եվ քանի կա մի ժողովուրդ—  
Նա անմահ է...  
Միշտ անմահ:

# ՎԵՐՋԵՐԿԻ ՓՈԽՄՐԵՆՆ

## ԼԵՌՆԵՐ ՀԱՅՐԵՆԻ

Ախ, ինչքան, ինչքան կարոտել եմ ձեզ,  
Սիրապանծ լեռներ, հայոց աշխարհի,  
Վազել եմ, հողնել ձեր լանջերում ես,—  
Իմ լեռներ, լեռներ, լեռներ հայրենի:

Ջմրուխայա լեռներ, սիրտս ձեզ թողի,  
Ռազմի դաշտ տարա բույրը վարդերի,  
Որ ինձ հետ լինի շունչը մայր հողի—  
Իմ լեռներ, լեռներ, լեռներ հայրենի:

Ձեր գազաթներից ամպերն են սահել,  
Ինչպես ձորն իջնող հոտը գառների,  
Կուզեի հիմա ձեր դիրկը ընկնել—  
Իմ լեռներ, լեռներ, լեռներ հայրենի:


Չէ որ մի կապույտ, կապույտ առավոտ  
Ձեր դրկում թողի աղջիկ վարդենին,  
Եվ սիրտս էլ թողի և հողիս խանդոտ—  
Իմ լեռներ, լեռներ, լեռներ հայրենի:

Հիմա նա այնտեղ ծաղիկ է փնջում  
Եվ ցողում շիթով չքնաղ աչքերի,  
Այդ հալթանակիս պատկն է թրջում—  
Իմ լեռներ, լեռներ, լեռներ հայրենի:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Դու Հայտատան իմ մայր . . . . .	3
Հնգամյակի երգը . . . . .	6
Հայրենիքիս . . . . .	8
Երիտասարդ սերունդ . . . . .	9
Մեր պատիվը . . . . .	11
Ահա երգը հիժա մեր սրտերի . . . . .	13
Վերադարձի ճախրին . . . . .	16
Հայրենի հող . . . . .	18
Իմ ժողովրդին . . . . .	19
Վերադարձ . . . . .	20
Ծիրանի ծառ . . . . .	21
Արև սովետական . . . . .	23
Երգ Երևանին . . . . .	25
Գարունն իմ այգում . . . . .	27
Գարունն այս բացվեց վարդի համբույրով . . . . .	28
Երկար շրջեցի դաշտերի գրկում . . . . .	29
Գարուն . . . . .	30
Գարնան արագիլ . . . . .	32
Աշուն . . . . .	33
Իմ աչքերը թափառում են ամպերում . . . . .	34
Մորս խրատը . . . . .	35
Զուլալ առուն վաղում է մեր բակի միջով . . . . .	36
Կանաչները կարտո են . . . . .	37

Հիմա հեռու հեռավոր իմ Հայաստանում . . . . .	38
Իմ մանկութեան օրերին եւս տեսել ես . . . . .	39
Գիշեա՛ էր կեա՛ ելա՛ քնից . . . . .	40
Եկար կողքովս անցար էսր . . . . .	41
Ես ձեզ գիտեմ արցունքներ . . . . .	42
Ես հիշում եմ . . . . .	43
Նորից վառվեցին լույսերն իրիկվան . . . . .	44
Մեր կյանքը լույս է . . . . .	45
Արևով արբած . . . . .	46
Ողջուն քեզ, գարուն . . . . .	47
Անանուն . . . . .	48
Խնդություն է ապրում իմ հոգին . . . . .	49
Եվ այսօր իմ սրտում գարուն է . . . . .	50
Ննջիր դու խաղաղ . . . . .	51
Հանդիպում . . . . .	52
Երբ անձրևն է աշնան աշմկում . . . . .	53
Կանչում են, . . . . .	54
Մյնջան լուսավոր . . . . .	55
Գարուն . . . . .	56
Երգչի ձայնը . . . . .	57
Երգ Տարասի մասին . . . . .	57
Հանդիպում . . . . .	61
Բանաստեղծն ու հոգը . . . . .	62
Երգչի ձայնը . . . . .	65
Վերջերգի փոխարեն . . . . .	82
Լեռներ հայրենի . . . . .	82



ՎՁ 03382 Պատվեր 93. Տիրած 3000.  
Տպագր. 2<sup>3</sup>/<sub>4</sub> մամ., հեղինակ. 2 մամ.:  
Հանձնված է արտադր. 4/II 1948 թ.  
Ստորագր. է տպ. 15/IV 1948 թ.

---

ՀՍՍՌ Մինիստրների Սովետին  
կից Պոլիգրաֆ. և Հրատ. Վարչ.  
№ 3 տպարան, Երևան,  
Արավերգյան 65

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0041281

9762 8 11.

